

Գիտությունների ակադեմիայի շենքը:

ԵՐԿՐԻ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԳԻՏԱԿԱՆԸ

ՄԻՔԱՅԵԼ ՀԱԿՈՒՅՍՏ

Պետրոս Մեծի նախագծով «Նորին կայսերական մեծությունը հրամայեց հիմնել ակադեմիա...»:

Այսպես է սկսվում Ռուսական կայսրության սենատական հրովարտակը, որ հռչակվել է 1724 թվականի հունվարի 28-ին (փետրվարի 8-ին)՝ գիտությունների և գեղարվեստի ակադեմիա հիմնելու մասին:

Պետրոս Առաջինը, նույն ինքը՝ «նորին կայսերական մեծությունը», վաղուց էր փափագում ակադեմիա հիմնելու գաղափարը՝ դեռևս XVII դարի վերջերից և մինչև նրա իրականացումը բանիցս խորհրդածել է դրա մասին: Բազմաթիվ հարցերի նետ ակադեմիա հիմնելու գաղափարն էր նա արծարծում նաև

Լայպնիցի նետ ունեցած գրուցի ժամանակ, փիլիսոփա Վոլֆին գրած նամակներում: Նա արդեն ծանոթ էր ժամանակի անվանի գիտնականների, նրանց թվում նաև Նյուտոնի նետ, 1717-ին այցելել էր Փարիզի ակադեմիան և ընտրվել նրա անդամ, իսկ դրանից մի քանի տարի անց 1714-ին, օտարերկրյա անուագրերում արդեն հաղորդում էր երևացել այն մասին, որ Պետրոս Առաջինը նպատակ ունի Ռուսաստանում ակադեմիա հիմնել:


Նա հասցրեց անձամբ ծանոթանալ ակադեմիա հիմնելու նախագծին, նշումներ կա-

տարեց նրա լուսանցքներում, սահմանեց, որ օտարերկրացի ակադեմիկոսները պետք է ունենան ուսա աշակերտներ: Ակադեմիան, որ իր բուն գործունեությունը սկսեց Պետրոս առաջինի մահվանից հետո, նրա կատարած վերափոխումների վերջին հանգույցն էր, երկրի զարգացման ու ամրապնդման ինդիկսներից բխող միջոցառումների որոյն վերջարանը, որով Ռուսաստանում ստեղծվեց գիտական առաջին օջախը: Գրանից առաջ՝ 1714-ին, նա հիմնել էր հանրաճաշտ Կունստկամերան՝ մեր բոլոր թանգարանների նախամայրը, և գրադարանը, իսկ մահվանից ոչ շատ առաջ հասցրել էր կազմակերպել Կամչատկայի առաջին էքսպեդիցիան՝ պարզելու համար, թե Ասիան միանում է արդյոք Ամերիկայի հետ:


Աղյակս Ռուսաստանը սուր դրեց գիտության մայրուղին, ունեցավ իր ակադեմիան, գիտնականներ հրավիրեց արտասահմանից՝ Յա. Գերման, Դ. Բեռնուլի, Լ. Էյլեր և ուրիշներ: Ազգային կադրեր նա չունեւ: Նույնիսկ պրեզիդենտ նշանակվեց դարձյալ

օտարերկրացի՝ պարսական բժիշկ Լ. Բլումենորտը:

Սույ էին անդրեմիային տրված միջոցները՝ տարեկան մոտ 25 հազար ռուբլի, որ պիտի հատկացվեր մի քանի քաղաքներից



Լ. Լ. Բլումենորտա՝ Գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտը:



գանձվող հարկերից: Ակադեմիայի մեջ էին մտնում Կունստկամերան, գրադարանը, աստղադիտարանը՝ հսկայածավալ գլոբոսով, անատոմիական թանգարանը, գիտական արխիվը, տպարանը և նրան աղբյուր հիմնված համարարանն ու գիմնազիան: Դա այն ամենն էր, ինչ կարող էր տալ այն ժամանակվա Ռուսաստանն իր նորաստեղծ ակադեմիային:

Շատ ժամանակ պետք չեղավ, որպեսզի ակադեմիան հոչակ ձեռք բերի, հայտնի դառնա նաև երկրի սահմաններից դուրս: Ակադեմիական առաջին պարբերական հրատարակությունը՝ «Commentarii», որ սկսեց լույս տեսնել 1728-ից, շուտով մեծ հետաքրքրություն առաջացրեց արտասահմանում:

Աստղադիտական էքսպեդիցիա՝ 1727—1730 թվականներին, առաջին ուսումնական առևտար՝ 1737-ին, ապա և Ռուսաստանի անդրանիկ գիտական առևտար՝ 1745-ին 19 հիսնայի քարտեզներով, Բերինգի երկրորդ էքսպեդիցիան՝ 1733—1743 թվականներին, Սիբիրի ուսումնասիրություն և Կամչատկայի ժողովուրդների ու բնության լայն հետազո-

Մի էջ գիտությունների և արվեստների ակադեմիա հիմնելու մասին նախագծից, որը Պետրոս Առաջինը հաստատել է 1724 թ. հունվարի 22-ին՝ անելով իր գիտողությունները:



Լ. ԿԻՐԻՆ

տություն,— սրանք են ակադեմիայի անդրանիկ խոշոր գիտական ձեռնարկումները, որոնք գլուխ էին քերվում մեծ դժվարություններով, բայց որոնց հանրագումարը լուրջ հայտ էր գիտական պատկանելի գործունեության համար:

Դժվարին ուղի է անցել Ռուսաստանի ակադեմիան: Հենց առաջին տարիներից այն ճաշակել է ֆինանսական դժվարությունների դառնությունը՝ հաճախ այնքան սպառնալից, որ թվում էր, թե կհասցնի «ակադեմիայի լրիվ քայքայմանը», ինչպես 1736-ին գրել է նրա պրեզիդենտ Ի. Կորֆը: Սինոդը արգելում, քանադորում էր գիտական հրատարակությունները, նույնիսկ թարգմանությունները: Խիստ դանդաղ էր աճում նրա կազմը. հիմնադրման տասներորդ տարում ակադեմիան ուներ ընդամենը 158 աշխատող: Գիտական գործունեությանը խանգարում էր զանազան արվեստների (արհեստների) կենտրոնացումն ակադեմիայի համակարգում: Ակադեմիան չունեւր շատ թե քիչ ինքնուրույնություն, թեև դա նախատեսված էր հիմնադրման նախագծով: Նրա պրեզիդենտներ էին նշանակվում ցարի դրամները՝ գրեթե բոլորը գիտության հետ կապ չունեցող մարդիկ: Այդպիսի դրամներից մեկը՝ գրադարանավար Շումախերը, օրինակ, 35 տարի շարունակ ինքնիշխան կերպով տնօրինում էր ակադեմիայում: Ակադեմիայի մի այլ տնօրեն՝ Կ. Ռագումովսկին, պրեզիդենտի պաշտոն ստացավ

18 տարեկանում և իշխեց ավելի քան հիսուն տարի՝ որևէ օգուտ չտալով ակադեմիային, ստալիկ ևս գիտությանը:

Գրեթե երկու դար շարունակ այդ դժվարությունները ավելի կան պակաս չափով ուղեկցել են ակադեմիային, և նրա գործունեության պատմությունը հայտնի չափով բնորոշվում է այն պայքարով, որ տևականորեն մղվում էր թե՛ ակադեմիայի ներսում և թե՛ ակադեմիայի ու ցարական վերնախավի միջև:

Երկրի ու ժողովրդի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրներից մեկը՝ ակադեմիայի ռուսականացումը, հեշտությամբ չլուծվեց: Հիմնադրման տասներորդ տարում միայն նրա կազմում երևաց առաջին ռուս ակադեմիկոս-օգնականը (աղյուակտ): Դա Վ. Ադոլֆովիցն էր, որ մշակեց ռուսերենի առաջին ուղղագրությունը և ավելի շատ հայտնի է հայրենական ակադեմիայի ակադեմիկոսների օտար լեզվով գրած աշխատությունների թարգմանություններով: Ի դեպ երկար ժամանակ (1728—1751) օտար լեզվով՝ լատիներեն էր հրատարակվում նույնիսկ ակադեմիայի պաշտոնական տպագիր օրգանը:

ԱԿԱԴԵՄԻԱՍԻ
ԼՈՍՏՈՆՈՍՈՎՅԱՆ ՇՐՋԱՆԸ

Ակադեմիան ազգային կերպարանք հիմնականում ստացավ 1740—1760-ական թվա-



Գիտությունների ակադեմիայի 1747—1748 թթ. աշխատանքների երկրորդ սերիայի առաջին հատորի անվանաթերթը (1750 թ.):

կաններին, երբ նրա կազմում գործում էր Միխայիլ Լոմոնոսովը (1711—1765)՝ ռուսական գիտության հայրը: Ակադեմիայի գործունեության լոմոնոսովյան այդ ժամանակաշրջանում առաջադեմ գիտնականները լուրջ պայքար ծավալեցին ռուսական գիտության ազգային ուղու և գիտական գործունեության ինքնուրույնության համար: Այդ պայքարը, որի նախաձեռնողը և ոգին ինքն Լոմոնոսովն էր, մղվել է մի այնպիսի ժամանակ, երբ, ինչպես նկատել է առաջադեմ գիտնական Ա. Նարտովը, ակադեմիան «ոչ մի օգուտ Ռուսաստանին չէր բերում», երբ այլևս անհնար էր մուսուլմանության տալ Պետրոս Առաջինի առաջադրած հիմնարարական դրույթը՝ «Ակադեմիան ինքն է իրեն կառավարում»:

Լոմոնոսովն ակադեմիայի գործունեության բարելավման և ազգային առաջադեմ գիտության համար պայքարում վճարար հակադրվեց հետադեմ ու օտարամոլ ակադեմիականներին և Ռուսաստանի ռեակցիոն իւրախին: Հանդես բերելով քաղաքացիական խիզախություն, նա իր լայն մտահորիզոնը, բուն էներգիան, իոր հայրենասիրությունը նվիրաբերեց ոչ միայն գիտությանը և նշանավոր դեր կատարեց քիմիայի, ֆիզիկայի, աշխարհագրության, աստղաբաշխության, երկրաբանության, մետալուրգիայի ասպարեզներում, այլև ակադեմիայի վերակառուցման ու ամրապնդման ոչ պակաս կարևոր գործին:

Լոմոնոսովյան ավանդույթները, որոնց համար պայքարում էին գիտնականների հաջորդ սերունդները, լուրջ դեր կատարեցին ակադեմիայի գործունեության հետագա բարելավման գործում: Արդեն 1766—1803 թվականներին ակադեմիայի կազմում ընտրված 40 նոր անդամներից 14-ը, պատվավոր անդամներից 51-ը, իսկ թղթակից-անդամներից 30-ը ռուսներ էին:

18-րդ դարի երկրորդ կեսին երկրի տրնտեսական, քաղաքական ու սոցիալական տեղաշարժերը նպաստեցին նաև գիտությունների զարգացմանը և պայմաններ ստեղծեցին առաջադեմ գիտնականների որոշիչ գործունեության համար:

Ակադեմիայի գործունեությունը մեծ չափով կախված էր նրա կանոնադրությունից, որը սահմանում էր նրա անելիքները, կառուցվածքը, ղեկավարման սկզբունքները, ֆինանսական միջոցները, հաստիքները: Ահա ինչու գրեթե մշտապես պայքար էր ծավալվում նրա կանոնադրության բարելավման, նոր կանոնադրության հաստատման՝ հետեվապես նաև ակադեմիայի ընդլայնման ու ամրապնդման համար: Ենթադրյալ տարի ակադեմիայի գործունեության համար ձևականորեն հիմք էր ծառայում նրա հիմնադր-



Մ. Վ. Լոմոնոսով

ման մասին ցարի հավանությանն արժանացած նախագիծը, որի մի շարք դրույթներն այդպես էլ գաղտնի մնացին:

1747-ին հաստատվեց ակադեմիայի առաջին կանոնադրությունը, որը, սակայն, շատ բիշ բանով նպաստեց նրա գիտական գործունեությանը. ավելին՝ կանոնադրությամբ միջոցների մեծ մասը և հիմնական ուղարկությունը հատկացվում էր «գեղարվեստներին», իսկ հասարակական գիտությունները հանձնվում էին համալսարանին: 26այած դրան, այն գոյություն ունեցավ մինչև 1803 թվականը: Ամբողջ տասնամյակներ ռուս առաջադեմ գիտնականները, սկսած Լոմոնոսովից, պայքարում էին ակադեմիայի դեմոկրատացման համար, հիմնավորում էին նրա վերակառուցման անհրաժեշտությունը, նույնիսկ կազմում էին կանոնադրության նախագծեր, քննարկում դրանք: Բայց իրար փոխարինող ցարերն ամեն անգամ մերժում էին:

ԱԿԱԴԵՄԻԱՆ 1803—1917 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ակադեմիայի 1803-ի նույնիսկ հաստատված կանոնադրությունը, որ ըստ էության նրա անցած ուղու և առաջադեմ գիտնականների մղած պայքարի հանրագումարն էր, նշանավորեց մի նոր ժամանակաշրջան ակադեմիայի և ռուսական գիտության զարգացման պատմության մեջ: Կանոնադրությունը սահմանում էր, որ ակադեմիայի խնդիրն է զարգացնել գիտությունները, դրանք հարըս-

տացնել նոր հայտնագործություններով, լուսավորություն տարածել և նպաստել գիտությունների գործնական կիրառմանը: Սահմանված նոր կարգով ակադեմիկոսների թիվըն ավելանալով հասավ 17-ի, իսկ ակադեմիային տրամադրվող միջոցները՝ 120 հազար ուրբո: Ակադեմիկոսների ընտրությունը կարգավորվելու հետ միասին նրանց գիտական գործունեությունը գրեթե դարձավ ինքնուրույն, համարյա վերջ տրվեց «ակադեմիական վարչարարների» մանրամասնի միջամբարություննային ու կամայականություններին, բայց դրա փոխարեն ուժեղացավ ցարի անփոխական հսկողությունը:

Ակադեմիայի հաջորդ կանոնադրությունը, որ ընդունվեց 1836-ին, որոշ փոփոխություններով գործողության մեջ մնաց մինչև 1927 թվականը: Այդ կանոնադրությամբ ակադեմիան նոր արտոնություններ ստացավ, նրա ֆինանսական տարեկան հատկացումները հասան 240 հազարի: Նույնքան տևական եղավ նաև ակադեմիայի կառուցվածքը՝ երեք բաժանմունքներով, առաջինը՝ ֆիզիկա-մաթեմատիկական, երկրորդը՝ ուսաց լեզվի և գրականության, երրորդը՝ պատմական և բանասիրական գիտությունների: Համեմատաբար ընդլայնվեցին ակադեմիայի և ակադեմիկոսների իրավունքները, նրա համակարգում ստեղծվեցին նոր հաստատություններ: 1839-ին հիմնվեց Պուլկովոյի աստղադիտարանը, 1841-ին նրան միացվեց ուսական ակադեմիան՝ իբրև մի առանձին՝ ուսաց լեզվի և գրականության, բաժին, ստեղծվեցին ակադեմիական թանգարաններ: Զուտ գիտական հարցերին սկսեցին նվիրվել ակադեմիական ամենշաբաթյա ժողովները: 1831-ից մինչև 1865-ը ակադեմիան տնօրինեց Պ. Դեմիդովի հատկացրած միջոցներով տրվող տարեկան չորս մրցանակները (5000-ական ուրբի), իսկ 1858-ից նաև Ուվարովյան մրցանակը: Դա, ինչպես և ակադեմիական ամենամյա մրցանակները (Լոմոնոսովի, Պուշկինի, Բերովի և այլն), որոշակիորեն նրաստեցին գիտական հետազոտությունների ծավալմանը:

Ակադեմիայի գիտական կյանքում նշանակալից եղավ նոր տիպի գիտնականների երևան գալը հանձին Բուտլերովի և Մենդելեևի, որոնք գիտնականի կոչումը զուգորդում էին քաղաքացու և հայրենասերի կոչման հետ: 19-րդ դարի կեսերին զգալիորեն ընդլայնվեց ակադեմիայի կապը երկրի զանազան շրջանների հետ: Նշանակալից էր հատկապես ակադեմիայի գործունեությունը բուն Ռուսաստանի ու նրա ծայրագավառների, դրանց շարքում նաև Կովկասի հետազոտման ուղղությամբ: Մասնավորապես պետք է



Վ. Վ. Տրետյակովսկի

շեշտել Վիլհելմ-Էերման Աբիխի (1806—1886) կատարած լայնածավալ երկրաբանական հետազոտությունը՝ սկսած 1840-ական թվականներից: Նա Կովկասի երկրաբանության առաջին ուսումնասիրողն էր, շուրջ երեսուն տարի Աբիխը հետիտոն ու գրաստով շրջագայեց Կովկասում, եղավ պատմական Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում: Նա կազմեց Հայաստանի առաջին երկրաբանական քարտեզը, ուսումնասիրեց երկրամասի բուսականությունը, հետազոտեց Զանգեզուրի և Ալավերդու պղնձի և կիսամետաղների ձեռնդավայրերը: «Հայկական լեռնաշխարհի երկրաբանությունը» նրա երկհատոր աշխատությունը (1882—1887) իր գիտական մեծ արժեքը պահպանեց տասնամյակներ շարունակ և այժմ էլ չի կորցրել իր նշանակությունը:

19-րդ դարի երկրորդ կեսին Ռուսաստանում անցկացված բարեփոխումներն, անուշտ, նպաստավոր պայմաններ էին ստեղծում նաև գիտության զարգացման համար: Բաց դրա հետ մեկտեղ գլուխ էր քարձրացնում նաև ռեակցիան, առաջ էին գալիս ԳԱ գործունեությանը խոչընդոտող նոր դժվարություններ, թեև ակադեմիան ամբողջությամբ վերցրած և նրա հիմնական կազմը ձգտում էին օլիմպիական հանգստություն պահպանել, անտարբեր էին դեպի երկրում տեղի ունեցող քաղաքական կարևոր իրադարձությունները:


Հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող խնդրումներից ակադեմիան հետո պահելու գիծը, որ վարում էր ցարական վերնախավը, ծնունդ տվեց «մարտ» գիտություն մշակելու հակումներին: Պալատական գործիչներն ավելի հաճախակի սկսեցին միջամտել ակադեմիական գործերին, նույնիսկ ակադեմիկոսների ընտրությանը, որի ինքնուրույն տնօրինումն ակադեմիայի կազմակերպական իրավունքն էր: Ակադեմիայի անփոփոխ քարտուղարը, պոետ, որ 1857—1890 թվականներին գրավել էր Կ. Վեսելովսկին, փաստորեն իր բուն մեջ էր պահում ակադեմիան և ցարի նշանակումով ակադեմիայի պրեզիդենտ դարձած ռեակցիոն գործիչների հետ խանգարում ակադեմիայի գիտական գործունեությանը: Ակադեմիայի կարգավորչուհի երկրում տեղի ունեցող իրադարձություններից դարձավ մամուլի և առաջադեմ հասարակության արդարացի բնահաղատության առարկան: Պալատական միջամտությանը, որը տվյալ դեպքում նպատակ ուներ ակադեմիան զերծ պահել մատերիալիստական-դեմոկրատական ազդեցություններից, «վետո» դրվեց այնպիսի ականավոր գիտնականներին ակադեմիայի իսկական անդամներ ընտրելու վրա, որպիսիք էին Ի. Սեֆենովը, Մեդեյկինը, Վ. Ռոզենը, Յարի

աննիցսկան միջամտությանը ավելի քան 15 տարի անխափն համարվեց Մ. Գորկու ակադեմիկոս ընտրվելը և օրինակաբանացվեց միայն 1917-ին:

Ակադեմիան անմիջապես վիճակում էր ոչ միայն դեկադարման, այլ նաև էյոթադեմիկական իմաստով: Նա չուներ իր կայուն հաստիքները, անհրաժեշտ շենքերը և սարքավորումները: Այդ հարցերը տառամայակից տառամայակ ձեռվում էին, բայց վերջնական լուծում չէին ստանում: Գ.Ա. միջոցներ չունեի տպագրական սարքավորումներ ձեռք բերելու, իր բանագրանները հարբստացնելու ու վերակառուցելու և այլնի համար: Ակադեմիայի անկախելի վիճակը գարման էր պատճառում մինչև անգամ Պետական դրամայի ներկայացուցիչներին, որոնցից մեկն իր պաշտոնական հաշվետվության մեջ արձանագրել է, թե դժվար է հավատալ այն ծանր դրությանը, որ տիրում է ակադեմիայում:


Գիտական ձեռնարկներին և բուն հետազոտություններին մեծ չափով խոչընդոտում էր հաստիքային այն սուղ վիճակը, որ գրեթե երկու հարյուր տարի շարունակ ուղեկցում էր ակադեմիային: Հատկաբանական է, որ մինչև տարվա պայքարից հետո միայն ակադեմիային հաջողվեց 1912-ին ստանալ նոր միավորներ ու ֆինանսական անհրաժեշտ հատկացումներ: Այդ ժամանակ նրա բյուջեն կազմում էր մեկ միլիոն 7159 ռուբլի, որից միայն 47 հազարը կարող էր հատկացվել գիտական ձեռնարկներին: Հետևյալ միջադեպն, օրինակ, բնորոշում է ակադեմիայի ֆինանսական դրությունը, երբ հայտնի դարձավ, որ Կովկասում կատարվելիք կարևոր նշանակություն ունեցող հետազոտության համար միջոցներ չի տրամադրվել, ակադեմիկոս Ա. Կոխլովը գիտնականների ժողովում իր գրայանից հանեց և սեղանին դրեց 500 ռուբլի: Հայտնի է, որ նույնիսկ Կ. Ցիպկովսկուն մեծ դժվարությամբ հաջողվեց իր հետազոտությունների համար ստանալ պահանջվող գումարը՝ 470 ռուբլի (անբողիքաբանական շուրջը հետազոտությունները կատարվում էին Գ.Ա. շրջանակից դուրս): Հարկ եղավ երեք տարի պայքար մղել, մինչև որ հաջողվեց հողամաս ստանալ Լոմոնոսովի ինստիտուտը կառուցելու համար և այն էլ սրբանունով, որ ակադեմիան կփոխանտուցի Պետերբուրգի քաղաքային դրամային և կրթնկարգի քաղաքի թաղամասերից մեկը:

Ակադեմիայի այդ վիճակի և գիտնականների անմիջապես դրությանը դեմ քողոքները շատով սաստիկանում էին: 1905-ի հունվարին, ընդամենը չորս օրով, ընդհանուր քողոք հայտնեցին 342



Վ. Վ. Պետրովի սարքը՝ «տորիչնայան դատարկության մեջ» մարմնի այրումն ստանձնարիչու համար:






Ա. Գ. Նարյանով

գիտնականներ, նրանց թվում 16 ակադեմիկոսներ: Այդ բողոքագիրը հետագայում ստորագրեց 1500 մարդ: Դա միակ դեպքը չէր, որ գիտնականները հանդես էին բերում քաղաքացիական խիզախությամբ:


Այդ ամենով հանդերձ գիտական միտքը ակադեմիայում առաջ էր ընթանում, հարցատանում նոր ներդրումներով. հիմնվեցին տասնյակ գիտական ընկերություններ, համընդհանուր ճանաչում ստացան խոշոր բուսաբան Կ. Տիմիրյազևի, ֆիզիկոս Պ. Լեբեդևի, քիմիկոսներ Ն. Ջիգիճի, Ա. Բուտլերովի, Դ. Մենդելեևի և Վ. Մարկովիկովի, մաթեմատիկոսներ Ա. Կոռկինի, Պ. Չեքեշևի և



Պ. Ը. Չերկով

Ա. Կովալևսկայայի, կենսաբաններ Կ. Բերի և Ի. Մեչնիկովի, հողագետ Վ. Դոկուչանի, բրժիշկ Ն. Պիրոգովի, ինչպես նաև ակադեմիկոս շատ աստղագետների, երկրաբանների, աշխարհագետների ուսումնասիրությունները: Մեծ առաջընթաց ապրեցին գրականությունը և հասարակական մյուս գիտությունները (Մ. Կովալևսկի, Ֆ. Ուսպենսկի, Ա. Վեսելովսկի և ուրիշներ): Ակադեմիկոսների կազմը 1856—1890 թվականներին համալրվեց 47 գիտնականով: Խոշոր չափով բարելավվեց ակադեմիայի ազգային կազմը: Դեռևս 1840-ական թվականներից ակադեմիայի իսկական անդամների շարքում տեղ չգտան օտարերկրացիներ, 1856—1890-ին ընտրված հարյուր պատվավոր անդամներից միայն վեցն էր օտարերկրացի:

Բուս ժողովուրդը տասնամյակից տասնամյակ տաղանդավոր գիտնականների նոր շրկատներ տվեց իր ակադեմիային: 1890—1917 թվականներին ակադեմիկոսներ ընտրվեցին ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների գծով 29, ուսաց լեզվի և գրականության՝ 20, պատմական գիտությունների և քանասիրության գծով՝ 19 ակադեմիկոսներ: 1917-ի մայիսին ակադեմիան վերջապես իրավունք ստացավ ինքնուրույն պրեզիդենտ ընտրել: Պրեզիդենտի երկամյա թափուր պատըն առաջին անգամ ընտրությամբ զբաղեցրեց գիտնականը՝ ուսանական երկրաբանության հայր Ա. Կարսկիսկին, որի վախճան-



Ք. Ս. Ցակարի թանաքագիտական հեռագրական սպարապարտ



Վ. Ի. Մուրադով

վելուց հետո, 1936 թվականին, սրեզիդենտ ընտրվեց Վ. Կոմարովը:

Իր ականավոր գիտնականների ջանքերի շնորհիվ ԳԱ գրեթե մշտապես գտնվում էր դարաշրջանի բարձրության վրա, իր տեղն ուներ եվրոպական երկրների ակադեմիաների շարքում, հատկապես բնական և ճշգրիտ գիտությունների ասպարեզում ձեռք բերած իր խոշոր նվաճումներով միջազգային համրավ էր վայելում:


1900 թվականին Ռուսաստանի ԳԱ մտավ ակադեմիաների միջազգային միության մեջ և այնուհետև առավել գործնական ակտիվությամբ մասնակցեց միջազգային գիտական կյանքին: Ռուս ականավոր շատ գիտնականներ ընտրվեցին արտասահմանյան ակադեմիաների և միջազգային գիտական ընկերությունների կազմում, հանդես եկան մեծ հետաքրքրություն առաջացնող հաղորդումներով և զեկուցումներով: ԳԱ ամենակախիվ մասնակցություն ցուցաբերեց սլավոնական երկրների ակադեմիաների և գիտական ընկերությունների միության հիմնադրման գործում (1914 թ.):

Մի երկարատև ժամանակաշրջան ԳԱ երկրի միակ գիտական, նաև մշակութային կարևորագույն օջախն էր: Ի տարբերություն եվրոպական ակադեմիաների, ճապետական հաստատություն էր և, բնականաբար, որոշիչ դեր խաղաց երկրի արդյունաբերության,


տեխնիկայի և լուսավորության ասպարեզում, բազմաթիվ էրազեկիցիաներ կազմակերպելով գիտությունը նպաստեցրեց նոր նվաճումներով ու նշանակությամբ:

Ռուսաստանի ակադեմիկոսները դրեցին ֆիզիկական քիմիայի, քիմիական տեխնոլոգիայի, գիտական տարաշինության, օպտիկայի, աստղաֆիզիկայի, երկրաբանության, հանքաբանության, մթնոլորտային էկոլոգիականության ուսումնասիրության կալուն թիմերը, ստեղծեցին գիտական նոր ուղղություններ մաթեմատիկայի և մեխանիկայի ասպարեզում: Նրանք ընդհուպ մտեցան բնագիտության խնդիրների մատերիալիստական ըմբռնմանը, կանգնեցին գիտության ու պրակտիկայի սերտ միասնության դիրքերի վրա:


Ռուսաստանի ակադեմիայի շատ գիտնականներ մնացան ծառայություններ են ներմուծել հայրենական գիտության ուկե Ֆրանսիայում, Մ. Լոմոնոսով, Լ. Էյլեր, Պ. Ա. Պավլա, Մ. Շտրոգրադսկի, Վ. Վիշնևսկի, Լ. Սարովև, Կ. Բեր, Խ. Ֆրեն, Է. Լենց, Է. Յակոբի, Վ. Բունյակովսկի, Պ. Չերիշև, Ս. Կովալևսկայա, Ն. Չիհին, Ա. Բուտլերով, Գ. Վիլյա, Գ. Գելմերսեն, Ն. Կոշկարով,



Ռուսաստանի ակադեմիայի շատ գիտնականներ մնացան ծառայություններ են ներմուծել հայրենական գիտության ուկե Ֆրանսիայում, Մ. Լոմոնոսով, Լ. Էյլեր, Պ. Ա. Պավլա, Մ. Շտրոգրադսկի, Վ. Վիշնևսկի, Լ. Սարովև, Կ. Բեր, Խ. Ֆրեն, Է. Լենց, Է. Յակոբի, Վ. Բունյակովսկի, Պ. Չերիշև, Ս. Կովալևսկայա, Ն. Չիհին, Ա. Բուտլերով, Գ. Վիլյա, Գ. Գելմերսեն, Ն. Կոշկարով,



Վ. Լ. Կոմարով



Վ. Ք. Վանյան

Ի. Մեչենիկով, Կ. Տիմիրյազև, նրանց հետ միասին նաև հասարակական գիտությունների ակադեմիայի շատ գիտնականներ, դժվարին պայմաններում կերտել են ակադեմիայի փառքը, հայրենական գիտության առաջընթացի ամրապինդ պատվանդանը: Ռուսական գիտության հաջորդ սերունդները— Գ. Մենդելևև, Ի. Մեչենով, Ն. Գիրցով, Ա. Լյապունով, Ա. Մարկով, Ֆ. Բրեդիխին, Ա. Կոստինսկի, Բ. Գոլիցին, Ա. Կարպինսկի, Ֆ. Չեռնիշև, Վ. Վեռնանդսկի, Ի. Բորոդին, Վ. Պալադին և, վերջապես, Ի. Պավլով— հենվելով իրենց նախորդների նվաճումների վրա մեծապես առաջ են մղել հայրենական գիտությունը:

Այլ ազգությունների նկատմամբ վարվող խտրականության և ռուսական մեծապետական շովինիզմի պայմաններում Ռուսաստանի մյուս ազգությունների շատ քիչ թվով ներհայացուցիչների էր հաջողվում տեղ գտնել ակադեմիայի կազմում: Չնայած դրան այլազգի մի շարք գիտնականներ, արժանանալով առաջավոր գիտնականների աջակցությանը, կարողացան որոշակի նախաձեռն հասնել և ընտրվել ակադեմիայի կազմում: Հայ ժողովրդի գավակներից Ռուսաստանի ԳԱ թղթակից-անդամներ են ընտրվել Բերովբե Պատկանյանը, Անդրեաս Արծրունին:

ԳԱ նախահոկտեմբերյան գրեթե ամբողջ պատմությունը ընդհանուր առմամբ բնորոշ-

ված է չինելիության համար մղված պայքարով: Մեծ համբավ ձեռք բերելու և գիտությունների զարգացմանը բազմակողմանորեն նպաստելու նետ մեկտեղ ակադեմիան հիմնականում մնում էր իբրև մեկուսացած մի հաստատություն, փաստորեն գոյություն չունեցող այն կապը ժողովրդի և ակադեմիայի միջև, որ պետք է պայմանավորեր գիտության իսկական ծաղկումը, ապահովեր նրա վերելքը: Ակադեմիան չէր տալիս այն, ինչ կարող էր և ինչ սպասում էր նրանից ժողովուրդը: Նրա գիտական հայտնագործությունները հաճախ մնում էին կամ անըմբռնելի, կամ դուրս չէին գալիս ակադեմիայի շրջանակից: Յարական-շահագործական կարգերը հնարավորություն չէին տալիս ժողովրդին իր ստեղծագործող տաղանդավոր ուժերը լիովին ի սպաս դնել գիտությանը, նպաստել նրա առաջընթացին:


ՍՍՍՏՐԵՄԻԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԸՐԶԱՆՈՒՄ

Հոկտեմբերյան հեղափոխությունը նոր դարաշրջան բացեց նաև գիտության համար: Գիտությանը հասարակության վերափոխման ու զարգացման դեր հատկացվեց, նրան հնարավորություն տրվեց թափանցելու կյանքի բոլոր ոլորտները:

Վ. Ի. Լենինի ցուցումով, սկսած 1918 թվականի հունվարից, ժողովրդատնտեսական



Ա. Ն. Ներսիսյանով



Մ. Վ. Կելիշ

խնդիրների կենսագործմանը մասնակից դարձվեցին նաև գիտական ուժերը: Փետրվարի 20-ին ակադեմիայի ընդհանուր ժողովը որոշում ընդունեց աշխատել սովետական պետության առաջադրանքով, իսկ ապրիլին լուսժողկոմատին ներկայացրեց երկրի արտադրական միջոցների ուսումնասիրության մասին իր ծրագիրը, որը համահընչուն էր Վ. Ի. Լենինի կազմած «Գիտատեխնիկական աշխատանքի ծրագրի նախագծին»:

Այդպես ակադեմիան դարձավ սովետական կարգերի ամրապնդման համար պայքարող օղակներից մեկը և ինքն էլ նրա հետ ու նրա ընձեռած հնարավորությունների շնորհիվ տարեցտարի ամրապնդվեց: 1925 թվականից նա հատուկ որոշումով վերակառուցվեց և կոչվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիա: Այդ ժամանակ նրան հատկացված շենքերի օգտագործելի տարածությունը կազմեց 91 000 քառակուսի մետր՝ 1917-ի 54 հազարի փոխարեն: Սովետական տարիներին, զգալիորեն աճած բյուջեից բացի, Ակադեմիան ստանում էր նաև միանվագ հատկացումներ: Նույն ժամանակամիջոցում Ակադեմիան ուներ 42 իսկական անդամ և 413 գիտաշխատող՝ 1917 թվականի 154-ի դիմաց:

1927-ին ընդունվեց Գ.Ա. Նոր կանոնադրու-

թյունը, որով ավելի ընդլայնվեց նրա գործունեությունը: Այդ կանոնադրությամբ սահմանվեցին Ակադեմիայի խնդիրները, նրա իսկական անդամների թիվը հասավ 75-ի, երեքի փոխարեն ստեղծվեց երկու բաժանմունք՝ մաթեմատիկական ու բնական գիտությունների և հասարակական գիտությունների: Ակադեմիայի աշխատողների ընդհանուր թիվը, 1917 թվականի համեմատությամբ, աճելով համարյա յոթ անգամ, հասավ 1500-ի: Նա իր գիտատեխնոլոգիական աշխատանքներով ընդգրկեց ամբողջ երկիրը՝ ներառյալ նաև նրա ծայրամասային շրջանները, դրանց թվում նաև Հայաստանը:

Ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյակների ընթացքում աննախադեպ վերելք ապրեց նաև ԳԱ: Նրա տարեկան բյուջեն 1934 թվականին կազմեց 25 միլիոն ռուբլի: Այդ թվականին էլ ակադեմիան Լենինգրադից փոխադրվեց երկրի մայրաքաղաքը՝ Մոսկվա: Նախապատերազմյան տարում՝ 1940-ին, նրա տարեկան բյուջեն արդեն հասել էր 177 միլիոնի: Ակադեմիայի իսկական անդամների թիվը 1941 թվականին 119 էր, թղթակից անդամներինը՝ 182, իսկ աշխատողների ընդհանուր թիվը՝ շուրջ 10 000:

Ինչպես սովետական երկրի զարգացման տարբեր ժամանակաշրջաններում, այնպես էլ Հայրենական մեծ պատերազմի ծանր տարիներին ԳԱ, էրք նրա պրեզիդենտն էր Վ. Կո-

մարովը, իր պատկանելի լուման մտքրեց սովետական ժողովրդի մղած հերոսական պայքարում, նպաստեց հաղթանակի ձեռք բերմանը, մասնավորապես երկրի ռեզերվների մոբիլիզացմանը:

Եսպատերազմյան քանամյակում ԳԱ ծավալը, նրա աշխատողների, հաստատությունների թիվն ավելի քան կրկնապատկվել են: 1957 թվականին ստեղծվել է ԳԱ Սիբիրի բաժանմունքը, որը փաստորեն դարձել է երկրի երկրորդ գիտական խոշոր կենտրոնը՝ Գիտությունների ակադեմիայից հետո: Միաժամանակ ստեղծվել են ԳԱ նոր մասնաճյուղեր ու գիտական կենտրոններ, որոնց ընդհանուր քանակն այսօր հասնում է 10-ի և ընդգրկում են մոտ 70 գիտական հիմնարկներ: ԳԱ մասնաճյուղերը ժամանակի ընթացքում աճելով դարձել են այն բազաները, որոնց հիման վրա ստեղծվել են հանրապետությունների գիտությունների ակադեմիաները, որոնց շարքում նաև ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան՝ իր շուրջ 6300 աշխատողներով: Այդ իմաստով ՍՍՀՄ ԳԱ կատարել է և այժմ էլ կատարում է մայր ակադեմիայի իր պատվավոր դերը:

Լենինի կրկնակի շքանշանակիր ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան, որի պրեզիդենտն է Մ. Կելդիշը, մեր երկրի բարձրագույն գիտական կենտրոնն է, ամենաաշուր օջախը: Նա ընդգրկում է բոլոր առարկաներում և բոլոր ուղղություններով կատարվող գիտահետազոտական աշխատանքները՝ սկսած օվկիանոսի խորքերից մինչև տիեզերքը: Ժամանակակից գիտության շատ ուղղությունների սկզբնավորողը և առաջատարը ԳԱ գիտնականներն են: Ակադեմիայի չորս սեկցիաներն այժմ միավորում են 16 բաժանմունքներ՝ գիտությունների բոլոր առարկաները և

ուղղություններ՝ ընդգրկող հաստատություններով. նրանց ընդհանուր քանակը հասնում է 250-ի: Ակադեմիայի համակարգում աշխատողների թիվը 1973-ին անցնում էր 20000-ից, որից 244-ն՝ ակադեմիկոսներ, 449-ը՝ թղթակից-անդամներ: Նրանց շարքերում են նաև հայ ժողովրդի զավակներ՝ ակադեմիկոսներ Ա. Թախտաջյանը, Տ. Խաչատուրովը, Հ. Կնունյանցը, Վ. Համբարձումյանը, Մ. Չալլախյանը, թղթակից-անդամներ Ա. Ալիխանյանը, Ա. Ադանբեկյանը, Ռ. Ավանեսովը, Բ. Բաղդասարյանը, Ս. Բարխուդարովը, Ռ. Բուդաղովը, Ն. Ենիկոլոպովը, Է. Հասարթյանը, Ս. Մերգելյանը, Բ. Ռեիզովը, Ց. Ստեփանյանը, Ա. Քարամյանը, Յու. Օսիպյանը: Հայ ժողովրդի շատ զավակներ Ակադեմիայի համակարգում գիտական առաջատար դեր են կատարում գիտության բազմաթիվ առարկաներում՝ ներառյալ նաև ատոմագիտությունն ու տիեզերագիտությունը:

Հատուկ պետք է նշել հայ ժողովրդի այն վախճանված զավակներին, որոնք մնայուն գործ են կատարել գիտության առարկաներում և ժամանակին ընտրվել են ՍՍՀՄ ԳԱ կազմում. ակադեմիկոսներ Հովսեփ և Լևոն Օրբելիներ, Հակոբ Մանանդյան, Աբրահամ Ալիխանով, Անուշավան Արզումանյան, Նորայր Սիսակյան, Արտեմ Միկոյան, թղթակից անդամներ Խաչատուր Կոչտոյանց, Արտավազ Ավագյան, Հովհաննես Իսակով, Ռուբեն Համբարձումյան:

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան, որը թևակոխել է իր գոյության 250-ամյակը, աշխարհի առաջատար գիտական հաստատություններից մեկն է: Նրա մեծ տարելիցը ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների տոնն է, աշխարհի առաջավոր գիտության տոնը:



ԲԱՎԱԿԱՆ Է ՄԻԱՑՆ ՑԱՆԿԱՆԱԼ...

...և այլևս ոչ մի խոշընդոտ սարսափելի չէ,— հայտարարեց ուստիկանին Թոմ Ուելնդոլը՝ կարմիր լույսի տակ կտրելով ամերիկյան Ջեքսոն քաղաքի կենտրոնական փողոցի խաչմերուկը: Պարզվեց, որ Ուելնդոլը մինչ այդ երբեք ավտոմեքենա չէր վարել, քանի որ ի ծնն կույր էր: Իսկ մեքենան նա վարում էր լսելով ընկերոջ հրամանները, որն այդ երեկո կերուխուսի մեջ էր եղել և վախենալով դեկի մոտ նստել, խնդրել էր կույր ընկերոջը իրեն տուն հասցնել: